
ՀՆԴԿԱՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(XVIII դ. սկիզբ)

ՍԵՊՈՒՀ ԱՍԼԱՆՅԱՆ (ԱՄՆ)

Հայ-հնդկական կապերուն մասին գոյություն ունեցող կանխագույն հավաստի աղբյուրը ԺԲ դարուն գրված հետաքրքրական հայերեն ուղեգրությունն մըն է Հնդկաստանի և Մալայան արշիպելագի հարևան կղզիներուն մասին, որ կը կոչվի «Անուանք քաղաքացն Հնդկաց եւ Սահմանք Պարսիցն», գոր վերջերս հրատարակած ու բժախնդրորեն վերլուծած է Գեղամ Գևոնյանը¹: Այս գործը, գոր կարելի է թվագրել ԺԲ դարու առաջին քառորդով, կը հուշե, որ հայերը արդեն ընտանի էին Հնդկաստանի և Հնդկաց օվկիանոսի հեռավոր տարածքներուն հետ արդեն այդ վաղ թվականներուն: Ինչպես Գևոնյան սրամտորեն կը նշե՝ «Եթէ անոնց [իմա՝ հայոց – Ս. Ա.] ներկայությունը ասիական առևտուրին մեջ ծանոթ է ԺԶ-ԺԹ դարերուն, այս բնագիրը կապացուցե, որ վերջինս լոկ շարունակությունն է հին ավանդության մը, որ իր էլևեջները ունեցած էր»²: Այսուամենայնիվ, այստեղ կարևոր է ընդգծել որ, թեև փաստերը կը թելադրեն, որ հայ անհատներ, ինչպես այս աշխարհագրական զեկույցին հեղինակը, Հնդկաստան այցելած էին ԺԲ դարուն և ավելի կանուխ, շատ քիչ ապացույցներ կան, որ հնդկական ենթացամաքամասին մեջ հայկական գաղթօջախներ գոյություն ունեին վաղ շրջանին³:

Հնդկահայ գաղթօջախներուն վերաբերող առաջին վստահելի տեղեկությունները ԺԶ դարու առաջին քառորդին կու գան: Երբ փորթուկալացիները առաջին անգամ հայտնվեցան Հնդկաստանի արևմտյան ափը 1498 թ. և շուտով սկսան գաղութացնել հարավային շրջանը, հոն հաստատված բազմաթիվ հայերու հանդիպեցան: Մելիափուր փոքր քաղաքը (ավելի ուշ Սան Թոմէ վերանվանված)՝ Մատրասի արվարձանները, ԺԶ դարու առաջին քառորդին հայ բնակիչներ ու-

¹ K. K e v o n i a n. Un Itinéraire Arménienne de la Mer de Chine.– Histoire de Barus Sumatra: Le Site de Lobu Tua: Etudes et Documents, Sous le direction de Claude Guillot, (Cahiers d’archipel 30: Paris, 1998), pp. 35-118. Հայերեն բնագիրը, ռուսերեն թարգմանությունը ու նաև նախորդ հրատարակումների մասին տե՛ս P. A б р а м я н. Армянский путешественник по Индии XII века.– «Բանբեր Մատենադարանի», -4, 1958, էջ 317-328:

² K. K e v o n i a n. Un Itinéraire Arménienne de la Mer de Chine, էջ 116.

³ Կա նաև ավելի վաղ ավանդություն Թովմաս Գանա անունով հայ վաճառականի մը մասին, որ կարող է հարավային Հնդկաստան այցելած ըլլալ Թ դարու սկիզբը և գործոն դեր կատարած՝ հակոբիկյան եկեղեցիի վերագաղթումին: Տե՛ս M. J. S e t h. Armenians in India. Calcutta, 1937; Թ ո վ մ ա ս Խ ո ջ ա մ ա լ յ ա ն. Պատմութիւն Հնդուստանայ (ձեռագիր Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, թիվ 535): Ինչ կը վերաբերի վաղագույն համայնքներու, ապա Մեսրոպը Մեթի պնդումը, թե Պենարեսի մեջ «հայ գաղթօջախ» մը կար մեր թվականության Ա հազարամյակին, դժբախտաբար կը մնա չհիմնավորված:

ներ: Ըստ փորթուկալական աղբյուրներու, Փուլիքաթ (Վիժայանակարի թագավորություն) ապրող հայ առևտրականներ նորեկ եվրոպացիները առաջնորդած էին Ս. Թովմաս առաքյալի դամբանը Մելիափուրի մեջ, ուր փորքիկ եկեղեցի մը կառուցված էր⁴: Ավելի ուշ, ՄԷ դարուն, երբ Փոնտիշերիի ֆրանսական գաղութին հիմնադիր Ֆրանսուա Մարթենը Սան Թոմե կը հաստատվեր իր նշանավոր հուշերը գրելու, ան քաղաքին հետ հայկական կապերու մասին հետևյալ նշումը կը կատարեր. «Հայտնի է, որ Սան Թոմե քաղաքի սկզբնավորությունը գործը եղած է բազմաթիվ հայերու, որոնք հաճախորդ դարձեր էին իրենց առևտուրը ընելու և իրենց նվիրումով հանդեպ այն սուրբին, որուն անունը քաղաքը կը կրէ: Երբ փորթուկալացիները ամրացուցին իրենց տիրապետությունը Հնդկաստան, այս ազգեն մարդիկ հաստատվեցան Հնդկաստան, հաստատվեցան ամենուրեք, շատերը՝ Սան Թոմե, ուր հոն ապրող հայերուն հետ միացան, տուներ շինել տվին և այսպես քաղաք մը կառուցանեցին, որ շատ կարևոր դարձավ հետագային Հնդկաստանի այլ շրջաններու հետ կատարվող առևտուրով: Կըսվի, թե հին ատեն իրենց հարստությունը միլիոններով հաշվող ընտանիքներ կային, իսկ սկիզբները առևտուրը իսկապես ոսկեհանք մըն էր»⁵:

Նույն դարու կեսին Մեծն Աքպար կայսրը (1552–1605) հայ առևտրականներ Ակրա հրավիրեց հաստատվելու⁶: Ըստ Մեսրոպ Մեթի, 1562-ին հայկական եկեղեցի մը շինված է հոն⁷: Տասնամյակներ ետք, երբ Հայր Մանրիքե Ակրայեն անցավ (1640), այցելություն մը տվավ քաղաքի հայկական իջևանատան⁸: Սուրաթի հյուսիսային կարևոր նավահանգիստը, որ Հնդկաստանի առաջին կայարանն էր Պասրայեն ու Օրնուզեն դեպի Արևելք ճամբորդողներու մեծ մասին, ՄԶ դարեն սկսյալ ևս հայ առևտրականներ հրապուրած էր: Քաղաքի հին հայկական գերեզմանատան հնագույն դամբանաքարը 1579 թվակիր է և հայ քահանայի մը կնոջ կը պատկանի⁹: Հիմնվելով այս փաստարկին վրա, Մեթ կեզրակացնե, թե քաղաքին մեջ նկատառելի քանակով հայ գաղթօջախ մը եղած ըլլալու է, որ ինքզինք-

⁴ Տե՛ս Կասփար Գոռեայի և ժոռոտ տե Պառնոսի պատմումները, մեջբերված Roberto Gulbenkian. Giacomo Abuna: An Armenian Bishop in Malabar (1503-1550). – "Estudos Históricos: Relações entre Portugal, Armenia e Medio Oriente", Lisboa, 1995, vol. 1, pp. 103-131. Հնդկածին հայերեն տարբերակը տե՛ս Ռ. Կյոնլյեյնի և Ն. Հայ-փորթուգալական հարաբերություններ. Երևան, 1986, էջ 286-310:

⁵ Mémoire de Francois Martin Fondateur de Pondichery (1665-1696), publié par A. Martineau, vol. 1, Paris, 1931, pp. 335-336.

⁶ Ակրայի հայերուն մասին տե՛ս Mesrobian Seth. Նշվ. աշխ., էջ 22; Դ. Փոլատյան. Ակրայի հայերը. Պելրութ, 1963: Rev. H. Hosten. Mirza Zul Qarnain, A Christian Grandee of Three Great Moghuls, with Notes on Akbar's Christian Wife and, the Indian Bourbons. – "Memoirs of the Asiatic Society of Bengal", Calcutta, 1916, pp. 115-194. Հնարձն չէ գտած Ակրայի հայ եկեղեցիի մը գոյության փաստը այդ թվականներուն, թեև բազմաթիվ ապացույցներ կը բերե այդ ժամանակաշրջանին հայերու Ակրա ներկայության մասին:

⁷ M. Seth. Նշվ. աշխ., p. 2. Մ. Մեթ ո՛չ մեկ ապացույց կը բերե այս պնդումին համար: Իր աղբյուրը, ամենայն հավանականությամբ, Թովմաս Խոջամայյանի «Պատմութիւն Հնդուստանայ»-ին կցված հավելվածը եղած է, ուր հեղինակը համառոտ կը հիշե Ակրայի մեջ հայկական եկեղեցիի մը գոյությունը ՄԶ դարու երկրորդ կեսին:

⁸ Travels of Fray Sebastian Manrique (1629-1643), vol. 2, London, 1927, p. 159.

⁹ M. Seth. Նշվ. աշխ., էջ 225:

նին կարտոններ քահանա մը և, հավանաբար, եկեղեցի մը ունենալ: Կըսվի, թե եկեղեցին մուղալներուն կողմէ քանդված է հետագային և, դժբախտաբար, նյութական կամ վավերագրական որևէ մնացորդ չէ հայտնաբերված:

Նոր Ջուղայի հիմնադրությունը 1605-ին արագացուց հայոց ճամբորդությունն ու հաստատումը Հնդկաստան: Նվազ քան կես դարու ընթացքին, նոր ջուղայեցի վաճառականներ արդեն կայցելեին Հայտերապատի, Կոլքոնտայի ու Մասուլիֆաթամի հարավային և Հուկլիի, Փաթնայի և Կալկաթայի հյուսիսային շուկաները: Արևմուտքեն Հնդկաստան ճամբորդող այլ վաճառականներու նման, նորջուղայեցիները ևս Պարսից ծոցեն մեկնող նավերով պետք է հասած ըլլան: Քանի որ մոնսուններու համակարգին պատճառով, որ Հնդկաց օվկիանոսի ճամբորդությունը կը ղեկավարեր, կարելի չէր նույն տարին Պարսից ծոցեն Հնդկաստան վերադառնալ առևտրական գործերը ամբողջացնելով, Հնդկաստան ճամբորդող առևտրականները սովորաբար երկու տարվան ժամկետ մը ունեին իրենց ապրանքները ծախելու և տուն վերադառնալու համար: Այս հասպտումը կը քաջալերեր նոր գաղթօջախներու ստեղծումը նախապես հայերե չքնակեցված վայրերու մեջ: Այդ դարուն վերջավորության, ջուղայեցիներ Հիմալայները Փաթնայեն կտրած էին Տիպեթի մայրաքաղաք Լհասայի մեջ փոքր գաղթօջախ մը ստեղծելու համար¹⁰ (1680-ական թվականներ – 1717): Գրեթե միաժամանակ հաստատված էին սպանական տիրապետության տակ գտնվող Մանիլայի մեջ¹¹, Հնդկաց օվկիանոսի սահմանագիծին վրա, իսկ ԺԸ դարու կեսին՝ Պաթավիո հոլանդական գաղութը¹²:

Հայ առևտրականները Պենկալ հաստատված էին ԺԷ դարու առաջին կեսին: Անոնք արդեն բնակություն հաստատած էին Կալկաթայի մեջ գրեթե կես դար առաջ, քան անգլիական Արևելյան Հնդկաց Ընկերությունը վարձեր, խոջա Սարհատ դի Իսրայելի միջնորդությամբ, Սուրանաթիի, Կովինտափուրի և Քալիքա-

¹⁰ Տիպեթի հայ գաղթօջախին մասին տե՛ս L. K h a c h i k i a n. The Ledger of the Merchant Hovhanness Joughayetsi.– “Journal of the Asiatic Society”, vol. VIII, №3, 1966. Հովհաննես Տեր-Դավթյան. Ջուղայեցու հաշվետումարը, աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափագյանի, Երևան, 1984: Տե՛ս նաև I Missionari Italiani nel Tibet e nel Nepal, a cura di Luciano Petech, 7 volume (Roma, 1952-56). L. P e t e c h. Un itinerario della Persia alla Cina.– “Bolletino della Società Geografica Italiana”, 1950, pp. 169-170; Kőrösi Csoma, A Tibetan Passport Dated 1688 A.D.– “Journal of the Asiatic Society of Bengal”, 1833, pp. 201-202. Storia do Mogor or Mogul India, 1653-1708, by Niccolao Manucci, translated with introduction and notes by William Irvine, vol. 2, Calcutta, 1966, p. 413.

¹¹ S e r a f i n D. Q u i s o n. English Country Trade with the Philippines, 1644-1765. Quezon City, 1966. Այս երկը միակ վստահելի աղբյուրն է, որ կը քննարկե Մանիլայի մեջ հայ վաճառականներու հաստատումը: Սեիլլայի (Սպանիա) Հնդկաց Արխիվը (Archivo de Indias) վավերաթուղթերու հարյուրավոր էջեր ունի Մանիլա հայ վաճառականներու մասին, որոնք տակավին քննված չեն:

¹² Հ. Հ ն ը դ ա ն ա ն յ ա ն. Նետրլանտական Արեւելեան Հնդկաստանի հայ գաղութի պատմությունը սկիզբէն մինչև մեր օրերը, Երուսաղէմ, 1937. M. S a r k i s s i a n. Armenians in South-East Asia.– “Crossroads: An Interdisciplinary Journal of Southeast Asian Studies”, vol. 3 (1987), № 2-3, pp. 1-3. B. C. C o l l e s s. Traders of the Pearl: The Mercantile Activities of Nestorian Christians and Armenians.– “Abr Nahrain”, պարբերաբար՝ 1969-1976-ին: Մալաքայի մեջ ԺԶ դարուն հայ վաճառականներու ներկայության մասին տե՛ս T o m e P i r e s. The Suma Oriental of Tome Pires: An Account of the East, from the Red Sea to Japan, Written in Malacca and India in 1512-1515, translated and edited by Armando Cortesao, vol. 2, London, 1944, p. 269.

թայի գյուղերը 1698-ին և վերջինիս մեջ՝ Ֆորթ Ուիլիամ բնակավայրը: Այս բնակավայրը և գայն շրջապատող գյուղերը մերօրյա Կալկաթայի կորիզը դարձան: Շահեկան է նշել, որ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցին (հին հայկական գերեզմանատան հողամասին վրա կառուցված 1724-ին) 1630-ական թվականներին գերեզմանաքար մը ունի: Մինչև այս գերեզմանաքարին հայտնագործումը 1885-ին, կենթադրվեր, որ Կալկաթայի առաջին օտար բնակիչներն ու հիմնադիրները անգլիացիները եղած էին¹³:

1665-ին հայերը հրավիրվեցան հաստատվելու Սայտապատ՝ Պենկալի նահանգային մայրաքաղաք Մուրշիտապատի մեկ արվարձանը: Նոր Ջուդայի իրենց հաստատումը հիշեցնող կերպով մը, Ավրանկգեպ կայսեր արքայական ֆերման մը իրենց հողեր տրամադրեց՝ գերազանցապես հայ առևտրական արվարձան մը կառուցելու համար¹⁴: Սայտապատի Ս. Աստվածածին եկեղեցին շինվեցավ 1758-ին:

Պենկալի ուրիշ կարևոր հայաբնակ քաղաք մը Չինսուրան կամ Չիչրան էր, Կալկաթայեն շուրջ 28 մղոն դեպի հյուսիս՝ Հուկլիի ծաղկուն նավահանգստային քաղաքին մոտ: Ըստ Սեթի, հայերու ներկայությունը 1645-ին թվագրելի է: Հայ վաճառականներու Չինսուրա գալուստին պատճառներն էին Հուկլիի կարևորությունը որպես նավահանգիստ և շրջանին բնույթը իբրև փորթուկալական և ապա հոլանտական Արևելյան Հնդկաց Ընկերություններու առևտրական կեդրոնատեղի¹⁵: Ի հեճուկս այս գաղթօջախին կարևորության, անոր վաղ պատմության վերաբերող սկզբնաղբյուրները շատ աղքատիկ են մինչև ԺԷ դարու վերջին տասնամյակը: Նոյեմբեր 1692-ին Հովհաննես Ջուդայեցի Չինսուրա այցելեց Տի-

¹³ Այս գերեզմանաքարին հարազատությունը որպես փաստ՝ անգլիական ժամանումեն առաջ Կալկաթայի մեջ հայերու ներկայության, առաջին անգամ վիճարկված է Գ. Ռ. Ուիլսոնի կողմէ, որ առարկած է, թե դամբանաքարը առանձնացած երևույթ մըն է և թե հավանաբար Կալկաթա բերված է ավելի ուշ թվականի մը: Տե՛ս իր Early Annals of the English in Bengal: Being the Bengal Public Consultations for the First Half of the 18th Century, vol. 1, London, 1895-1919, p. 137. Հնդկաստանի մեջ հայ վաճառականության իր փաստալից պատմության մեջ, վերջերս, Պասավաթի Պաթաչարիա կը թվի համաձայն ըլլալ Ուիլսոնի հետ (Bhaswati Bhattacharya, Armenian European Relationship in India 1500-1800: No Armenian Foundation for European Empire?—“Journal of the Social and Economic History of the Orient”, vol. 48, № 2, 2005, pp. 277-322, see p. 292: Երկու հեղինակները, սակայն, կանտեսեն այն փաստը, որ հնդկահայերը սովորությունը ունենին իրենց եկեղեցիները կառուցելու իրենց նախնայաց դամբարաններուն վրա: Այս եղած էր Մատրասի Ս. Աստվածածին եկեղեցիի պարագան, որ, Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցիի նման, ԺԸ դարու իր կառուցումը կանխող գերեզմանաքարեր ունի: Ավելի ն, պետք է նկատի ունենալ, որ Կալկաթայի հայկական եկեղեցին շինված է նախապես Մուքիաս հարուստ ընտանիքին պատկանող հողամասերու վրա: Այս ընտանիքը Մութանաթի հաստատված էր (հետագային Կալկաթայի մաս դարձած գյուղերեն մեկը) ԺԷ դարու սկիզբը:

¹⁴ Այս գուզահեղը առաջին անգամ հիշած է Բնա Բադդեանց Մաթթեյայ (տե՛ս I n a B a g h d i - a n t z - M c C a b e. Shah's Silk for Europe's Silver. Atlanta, Georgia, 1999, p. 290-291):

¹⁵ Փորթուկալացիները խարխիս մը ունենին Պանտելի մեջ, Չինսուրայեն քանի մը մղոն հեռու, ուր եկեղեցի մը շինած էին 1595 թ.: Չինսուրա հոլանտական Արևելյան Հնդկաց Ընկերության կեդրոն դարձած էր 1656թ. և չ՛ թե 1645 թ., ինչպես Սեթ գրած է (տե՛ս O m P r a k a s h. The Dutch East India Company Trade in India, Princeton, N. J., 1985, p. 41): Հուկլիի կարևորության մասին որպես նավահանգիստ տե՛ս U s u s h i l C h a u d h u r i. The Rise and Decline of Hugli: A Port in Medieval Bengal.—“Bengal Past and Present: A Journal of Modern Indian and Asian History”, 1967, January-June, pp. 33-68:

պեթեն վերադառնալե ետք և իր օրագրին մեջ նշեց, թե եկեղեցական արարողություններու կատարումին համար նվիրատվություն մը կատարած էր տեղվույն հայ քահանայի մը¹⁶: Տրված ըլլալով, որ քաղաքի հայկական եկեղեցին շինված է Հովհաննեսի այցելութենէն երեք տարի ետք, կրնանք ենթադրել, որ հայերը մասնավոր տուն մը կը գործածէին կրոնական արարողություններու համար¹⁷: 1695-ին, ծագումով նոր ջուղայեցի հարուստ վաճառական մը՝ խոջա Հովսէփ Մարգարյան, որու ազգականները Չինսուրայի առաջին հայ բնակիչներու շարքին եղած էին հավանաբար ՏԷ դարու կեսին¹⁸, 1695-ին 20.000 ռուփի տրամադրեց Ս. Հովհաննէս Մկրտիչ հայ եկեղեցւո շինության համար, ուր իր Հովհաննէս եղբայրը թաղվեցավ¹⁹:

ՏԷ դարու սկզբնավորության հնդկահայ համայնքները՝ Նոր Ջուղայի եկեղեցական իրավասության տակ կը գտնվէին: Այս համայնքներուն ազգային դիմագիծի պահպանության նախանձախնդրությամբ, առաջնորդը պարբերաբար հնդկահայ եկեղեցիներուն նոր ջուղայեցի քահանաներ կը հայթայթէր: Մոտ 1793 թ. թեմական հեղինակության նվիրապետական հետևյալ կարգը ստեղծված էր: Մուրաթի եկեղեցու ավագ հովիվը իշխանություն ուներ Պոսպեյի, Շահճեհանապատի, Ավրանկապատի և Հայտերապատի հայ քահանաներուն վրա, Մատրա-

¹⁶ Հովհաննէս Տեր Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 281: Լ. Խաչիկյան իր ներածության մեջ (էջ 33) կը նշէ, թե Հովհաննէս Հուկլիի (իմա՝ Չինսուրայի) «հայկական եկեղեցու» դրամ նվիրած է, բայց քանի որ նման եկեղեցի մը գոյություն չունէր Հովհաննէսի այցելության ժամանակ (այսինքն՝ 1692-ին), կրոնական արարողությունները պետք է կատարված ըլլան մասնավոր տան մը մեջ:

¹⁷ Ասիկա կը թվի սովորություն մը եղած ըլլալ հոն, ուր որ հայերը եկեղեցիներ չունէին: Օրինակ, Հովհաննէս Ջուղայեցի կը հիշէ, որ Փարթնայի մեջ հայ կրոնավորի մը հանդիպած է. տէս Հովհաննէս Տեր Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 21-22: Հոն հայերը եկեղեցի չունէին, բայց հավանաբար մասնավոր տուն մը կ'օգտագործէին:

¹⁸ Տէս կ'արևոյ «օրինական զեկույց»-ը, գոր Փարիզի մեջ հրատարակած է Հովհաննէսի հայրը՝ Մարտիրոս դի Մարգարա Ավագշինց, ֆրանսական Արևելյան Հնդկաց Ընկերության առաջին տնօրէններէն մէկը Հնդկաստանի մեջ, 1670-ական թվականներու Ընկերության դեմ իր դատական գործին համար: Փաստաթուղթը վերնագրված է Factum Contenant l'histoire tragique; pour le Sieur Martin Marcara Avachinz de la ville d'Hispanhan, Capitale de Perse, conseiller au Conseil Souverain de l'sle Daufine, & directeur des comptoire de la Compagnie Francoise des Indes Orientales dans les Indes et dans la Perse, demandeur en requeste presentee au conseil de sa majesté du 6 Mars 1676. Et Michel Marcara, son fils (Փարիզի Ազգային Գրադարան (BNF) Manuscrits Fr. 15529): Տէս նաև համանման «զեկույց»-ը, որ պահված է BNF Ms Fr. 8972: Մարտիրոս դի Մարգարա կը հաստատէ, որ Հնդկաստան ճամբորդած է երիտասարդ տարիքին (հավանաբար՝ 1640-ական թվականներուն) և երկար տարիներ իր եղբայրներուն հետ առևտուրով զբաղած: Ս. Մեթ կը գրէ, որ Մարգարայան ընտանիքը կապ ունեցած է Չինսուրայի հայ գաղթօջախի հիմնադրության հետ 1640-ին, առանց սակայն որևէ աղբյուր հիշատակելու: Մարտիրոս դի Մարգարա Ավագշինցի մանրամասն քննարկումի մը համար տէս B a g h d i a n t z - M e c C a b e. The Shah's Silk, p. 295-225.

¹⁹ Հովսէփ Մարգարայանի կտակի ծավալուն մեջբերումը տէս Հ ո Վ հ ա ն ն է ս Տ էր Հ ո Վ հ ա ն յ ա ն ց. Պատմութիւն Նոր Ջուղայու. հ. 1, Նոր Ջուղա, 1980, էջ 198-201: Այս արժեքավոր կտակին բնագիրը պահպանված էր Ս. Ամենափրկիչ Մայր տաճարի արխիվներուն մեջ, բայց կը թվի անհետացած ըլլալ 1850-ական թվականներուն Տեր Հովհաննէսի կողմէ գործածվելէ ետք: Չինսուրայի եկեղեցին անվանակոչված է ի հիշատակ Հովհաննէս Մարգարայանի, որու զեղազարդ դամբանաքարը տակավին լավ պահպանված վիճակի մեջ է և կը գտնվի եկեղեցիին մեջ:

սի հովիվը՝ Մուշիպանտարի, Նակափաթանի, Փեկուի և Պաթավիոյ վրա, մինչ, 1724-ին հիմնվել է տք, Կալկաթայի Ս. Նազարեթի եկեղեցին իրավասություն ունեն Չինսուրայի, Սայտապատի և Տաքայի եկեղեցիներուն վրա²⁰: Փաստերը ցույց կու տան, որ ԺԸ դարուն հնդկահայ եկեղեցիները երկու կամ երեք քահանաներ ունեին ամեն ատեն: Հետաքրքրական է, որ այս քահանաները Նոր Ջուղայի առաջնորդին հետ կանոնավոր կապ կը պահեին օգտագործելով առևտրական նամակաբաշխության նույն համակարգը, զոր հայ առևտրականները ստեղծած էին Նոր Ջուղայի լայնատարած ցանցին համար: Ջուղա-Հնդկաստան առևտրական թղթատարը կարևոր բաղկացուցիչ էր հնդկահայ կյանքին:

Նոր Ջուղայի առևտրական թղթատարն անվանված է նաև «հետախուզական ցանց»²¹, որ բաղկացած էր այսպես սասած զարգացած թղթատարական համակարգէ մը, ուր նամակները Հնդկաստանի մեկ հայկական գաղթօջախէն մյուսը կը փոխանցվէր և, ի վերջո, ցանցի կեդրոնը կը հասներ, այսինքն՝ Նոր Ջուղա²²: Երբեմն ասիկա կը կատարվէր արհեստավարժ սուրհանդակներու (պարսկ. չափար²³, շաթեր կամ դասիտ), բայց ավելի հաճախ՝ ճամբորդող առևտրականներու միջոցով: Հնդկաստանէն Նոր Ջուղա գացող նամակագրության մեծ մասը կը ճամբորդէր եվրոպական նավերով (սովորաբար անգլիական, ֆրանսական և հոլանդական Արնեյան Հնդկաց Ընկերություններուն), ինչպես և հայ առևտրականներու վարձած կամ պատկանած նավերով: Հավելվածաբար, հայ առևտրականները նաև կօգտվէին մուղալներուն պատկանող նավերէ, ինչպես Մուրաթի Չալապիներու վաճառականական նշանավոր ընտանիքին սեփականությունը երդող պատկառելի տորմիդի պարագային: Երբ արհեստավարժ սուրհանդակներու դիմում չէր ըլլար, նամակները կը հանձնվէին («թասլիս») Սպահան կամ Պարսից ծոց ճամբորդող հայ առևտրականի մը: Պենկալէն Նոր Ջուղա գացող նամակագրությունը երկու ուղիներէ կրնար անցնիլ: Առաջին և ամենէն հաճախակի ճանապարհը ծովայինն էր, որ Հուկլիի կամ Կալկաթայի նավահանգիստներէն մեկնող նավերու վրա կը հիմնվէր: Նամակները Հնդկաստանի արնեյան ծովափէն կրնթանային, կանգ առնելով Մատրաս և Մուրաթ, ուրկէ կը ղրկվէին Պասրա՝ Պարսից ծոց: Այստեղ կը հանձնվէին Սպահան ճամբորդող հայ վաճառականներու: Երբեմն Նոր Ջուղայի ընտանեկան ընկերություններու համար աշխատող արհեստավարժ սուրհանդակներ Պասրա կը սպասէին կարևոր նամակ-

²⁰ Հ. Տ եր շ ն վ հ ա ն յ ա ն ց. Պատմութիւն Նոր Ջուղայու, էջ 419: Ծ. Խ ա չ ի կ յ ա ն. Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա տնտեսական կապերը Ռուսաստանի հետ. Երևան, 1988, էջ 53:

²¹ Այս եզրը փոխ առած եմ Ռենէ Պարենստէի հոդվածէն. R e n e B a r e n d s e. The Long Road to Livorno: The Overland Messenger Service of the Dutch East India Company in the Seventeenth Century.– “Itinerario”, vol. XII 1988, N 2, pp. 25-45:

²² Տե՛ս S. A s l a n i a n. Trade Diaspora versus Colonial State: Armenian Merchants, the East India Company and the High Court of Admiralty in London 1748-1752.– “Diaspora: A Journal of Transnational Studies”, vol. 13, №1, 2006.

²³ Մեֆյան և հետսեֆյան Գրանի մեջ չափարներու համակարգին մասին տե՛ս Վիլլեմ Ֆլորի հոդվածը (W i l l e m F l o o r. Chapar, Encyclopedia Iranica), ինչպես և իր “The Chapar-khana System in Qajar Iran.” Iran, vol. 39, 2001, pp. 257 – 291:

ներու ժամանումին՝ իրենց գործատերերուն արագորեն հասցնելու համար գանձը²⁴: Որոշ պարագաներու, նամակները Պանտար Ռիկ նավահանգիստը (Պարսից ծոց) կը բեռնաթափվեին և ապա Նոր Ջուղա գացող սուրհանդակներու կը հանձնվեին:

Պենկալեն երկրորդ՝ ցամաքային, ճանապարհը կօգտագործեր զրաբեր մը (փաթթամար²⁵ կամ տաք²⁶), որ Տեքքանի դաշտավայրեն Սուրաթ կերթար, իսկ անկէ Պարսից ծոց՝ նավով: Ցամաքային ու ծովային ճանապարհներու այս համադրությունը քանի մը ամսվան խնայողություն մը կը նշանակէր:

Հնդկաստան–Ջուղա նամակաբաշխական համակարգը բազմաթիվ դժվարություններու կը հանդիպէր: Անոնցմէ ամենէն կարևորը մոնսուններու համակարգն էր (Նոր Ջուղայի բարբառով՝ մուսում < արաբ. mawsim²⁷ «առևտուրի եղանակ», որմէ կու գա հնդկ. և անգլ. monsoon բառը), որ տիրական ազդակն էր

²⁴ Օրինակներու համար տե՛ս հայերու կողմէ վարձված «Սանթա Գաթարինա» նավէն գրավված խիստ ուշագրավ նամակագրությունը: Պենկալի Խոջա Մինասյան ընտանիքին կողմէ վարձված նավը 1748 թ. գրավված էր Հնդկաստանի անգլիական նավատորմին կողմէ այն պատրվակով, որ ֆրանսական նավ մըն էր: Գրավումէն ետք, բրիտանացիները նավուն ամբողջ նամակներու բեռը (շուրջ 5.000 ընտանեկան և գործարարական նամակներ, որոնք Հնդկաստանէն Նոր Ջուղա կ'առաքվեին) ուղարկած են Լոնտոն զայն որպէս ցուցանմուշ օգտագործելու համար հետագա դատավարության ընթացքին: Այս դատին, որ տեղի ունեցած է Լոնտոնի Օտվակալության Բարձր Ատենին անոն (High Court of Admiralty, HCA), հայ վաճառականները անհաջող կերպով փորձած են իրենց նավուն ապօրինի գրավումը վիճարկել: Պարսից ծոցի նավահանգիստները սպասող արհեստավարժ սուրհանդակներու մասին, տե՛ս նամակ HCA-44 շարքին մէջ:

²⁵ Փաթթամարներու դերին և թղթատարի մասին տե՛ս Քրիստոֆրը Պեյլի կարճ անդրադարձը (Christopher Bayly. Empire and Information : Intelligence Gathering and Social Communication in India, 1780-1870, Cambridge-New York, 1996) և U s h a A g a r a l. An Account of the Postal System in India from 1650 to 1750.– “Bengal Past and Present: A Journal of Modern Indian and Asian History”, January-June 1966, pp. 40-57:

²⁶ Տե՛ս H. J o b s o n. A Glossary of Colloquial Anglo-Indian Words and Phrases, and of Kindred Terms, Etymological, Historical, Geographical and Discursive. new ed. edited by William Crooke, B.A., London, 1903, “dak” կա՛մ “dawk” էզրին քննարկումին համար (“DAWK , s. H. and Mahr. dak, 'Post,' i.e. properly transport by relays of men and horses, and thence 'the mail' or letter-post, as well as any arrangement for traveling, or for transmitting articles by such relays”): Հետաքրքրական է նշել, որ նորջուղայեցիները ևս այս էզրը օգտագործած են մուղալ Հնդկաստանի մէջ իրենց նամակագրության հողային ճանապարհով առաքումին համար: Այսպէս, Մատրասէն Նոր Ջուղա 1711 թ. հայ քահանայի մը գրած նամակին մէջ կը կարդանք.– «որ եւ յայտ լիցի վեհափառութեանդ, որ մեծ թիւն ՌՃՁ յուլիսի մէկէն եւ ԻԲ-քէն գրած սուրբ օրհնութեան թուղթն Սուրաթին վերայ հասաւ թիւն ՌՃԿ յամսեանն ապրիլի ԻԶ եւ մայիսի Ի: Մէկն ձեռամբն Շարիմանէնց պարոն Սարհադին եւ մէկն՝ փայեկի» (Ս. Ամենափրկիչ վանքի արխիվ, թղթակալ 104, «Նամակներ Մադրասից»): Մեզ հետաքրքրող բառը «փայեկ»-ն է, որ, ամենայն հավանականությամբ, պրսկ. “paik” բառն է, որ այլ բաներու շարքին, կը նշանակէ նաև «վազող հետևակ մը. կրող մը, սուրհանդակ. պահակ մը. դիտորդ մը. հետևակ մը» (տե՛ս Francis Joseph Steingass. A Comprehensive Persian-English Dictionary, Including the Arabic Words and Phrases to be Met with in Persian Literature. London, 1892, p. 268):

²⁷ Տե՛ս Solomon Goitein. A Mediterranean Society: The Jewish Communities of the Arab World as Portrayed in the Documents of the Cairo Geniza. Vol. 1, Berkeley-Los Angeles, 1967, pp. 276-277. Ինչպէս Կոյթէյն դիտել կու տա, «մասիմ բառը կը նշէր թե՛ կարավանը և թե՛ տոնավաճառի կամ գործառնության եղանակը, որ անոր ժամանումին հետ կապված էր»: Բառը, հավանաբար, ավելի ուշ կապված է բացառաբար օվկիանոսային եղանակներուն հետ: Նոր Ջուղայի բարբառին մէջ բառը, ամենայն հավանականությամբ, արաբերէնէն ուղղակի փոխառություն մըն է:

Հնդկաց օվկիանոսի ափերը ապրող բոլոր ժողովուրդներուն: Հոն գոյություն ունեին մոնսունի երկու ընդհանուր եղանակներ²⁸: Առաջինը (հյուսիսարևմտյան մոնսուն) հոկտեմբերեն մինչև մարտ կերկարեր և անով կը մեկնարկեր Հնդկաստանեն Պարսից ծոց նավարկությունը: Հնդկաստանեն մեկնող նավերը պետք է սովորաբար հունվարին ճամբա ելլեին դեպի Պարսից ծոց՝ արևմուտք փչող հովերը բռնելու համար: Հակառակ պարագային, նավարկումի մինչև մեկ տարվան հապաղում մը տեղի կունենար: Մյուս եղանակը ապրիլեն մինչև սեպտեմբեր կերկարեր, երբ աֆրիկյան ծովափեն դեպի արևելք՝ Հնդկաստանի ծովափը փչող հովեր կարձանագրվեին: Պարսից ծոցեն կամ Կարմիր ծովեն դեպի Հնդկաստան մեկնիլ ուզող նավեր, այս պարագային, պետք է վաղ ամռան ճամբա ելլեին՝ ուշ աշնան հասնելու համար: Մեկ ուղղությամբ ճանապարհորդությունը առհասարակ երեքեն վեց ամիս կը տներ: Հնդկաց օվկիանոսի այս յուրահատուկ կենսակառույցը սահմաններ կը գծեր մարդոց կարելիություններուն: Փաստորեն, անկարելի է հասկանալ առևտրական և ընկերային կյանքը Հնդկաց օվկիանոսին մեջ առանց նկատի ունենալու օվկիանոսի աշխարհագրության և բնապահպանության պայմանները: Ասիկա հատկապես նորջուղայեցիներու պարագան էր, որոնց գաղթօջախները՝ Հնդկաստան և այլուր, կարիքը ունեին տնականորեն թարմանալու վաճառականներու, վարկի, քահանաներու և, ամենեն ավելի, տեղեկություններու կանոնավոր շրջագայությամբ՝ Նոր Զուղայի կեդրոնեն: Ասիկա լիուլի կախում ուներ մոնսունի համակարգեն, ի մասնավորի՝ նամակաբաշխության պարագային:

Հնդկաստան – Նոր Զուղա նամակագրության արագության մասին տվյալներ չկան: Բարեբախտաբար, կարելի է մոտավոր հաշվարկ մը ընել, հիմնվելով այն իրողության վրա, որ ջուղայեցի առևտրականները սովորությունը ունեին ստացումի թվականը արձանագրելու՝ կարևոր նամակներու պարագային: Նոր Զուղայի, Վենետիկի և Լոնտոնի դիվաններեն քաղված բազմաթիվ նամակներու ուսումնասիրության հիմամբ, ԺԸ դարու կեսին Սպահան – Կալկաթա նամակային ճամբան երեքեն (ամենեն արագ նամակը, զոր գտած ենք մեր հավաքած նամակներուն մեջ) մինչև յոթ ամիս երեք շաբաթ կը տներ առաջնահերթ նամակներու պարագային, և միայն երկու շաբաթ ուշացում կար Չինսուրայի և Կալկաթայի միջև: Սուրաթեն Կալկաթա դրկված մեկ նամակի պարագան ունինք, որ տասնմեկ օրեն իր հասցեն հասած է: Այս մեկը, հավանորեն, նավով դրկված չէ, այլ

²⁸ Այս մասին մեր տեղեկությունները ամփոփած ենք հետևյալ աղբյուրներեն՝ K. N. Chaudhuri. Trade and Civilisation in the Indian Ocean: An Economic History from the Rise of Islam to 1750. Cambridge–New York, 1985, p. 127. J a n e t L. Abu-Lughod. Before European Hegemony: the World System A.D. 1250-1350. New York, 1989, pp. 251-260 և 8-րդ գլուխ: Մոնսուններու քննարկումի դասական կը մնա Arab Navigation in the Indian Ocean before the Coming of the Portuguese, Being a Translation of Kitab al-fawaidfi Usul al-bahr wa'l-qawa'id of Ahmad b. Majid al-Najdi, together with an Introduction on the History of Arab Navigation, Notes on the Navigational Techniques and on the Topography of the Indian Ocean, and a Glossary of Navigational Terms by G. R. Tibbetts. London, 1971, pp. 360-382. G e o r g e F. H o u r a n i. Arab Seafaring in the Indian Ocean in Ancient and Early Medieval Times Revised and Expanded by John Carswell, Princeton, 1995. Արժեքավոր քննարկում մը ունի մոնսունի համակարգին մասին A u g u s t e T o u s s a i n t. The History of the Indian Ocean (translated by June Guicharnaud, Chicago, 1966):

հնդիկ վագորդի մը կամ փաթթամարի միջոցով՝ Տեքքանի մեծ դաշտավայրեն: 1747-ին Պասրայեն Սպահան նամակները կը հանձնվեին 16 օրեն, Պուշիրեն Սպահան՝ երկու ամիսեն: Ասոնք գործարարական նամակներ էին, որոնք առևտրական գործունեության համար կենսական տեղեկություններ կը պարունակեին: Անոնց առաքման տևողությունը ամենեն արագը պետք է նկատել, տրված ըլլալով անոնց հրատապությունը: Նույնը չէր պարագան եկեղեցական նամակներու համար: Այսպես, ստորև հրապարակվող նամակեն կիմանանք, որ Նոր Ջուղայի առաջնորդին օրհնության գիրը Չինսուրայի եկեղեցիին «հունիս 18 1725» թվագրված է, և Չինսուրա հասած է «սեպտեմբեր 23 1726»-ին Մատրասի ավագ քահանային ճամբով, որ նամակը նախօրոք պետք է ստացած ըլլա: Ասիկա կը նշանակէ, որ նամակը մոտ մեկ տարի և երեք ամիս ետք տեղ հասած է²⁹: Անշուշտ, ԺԸ դարու Հնդկաց օվկիանոսի թղթատարական համակարգը շատ դանդաղ և անարդյունավետ էր արդի չափանիշներով: Նավերը ծովահեններու զոհ կը դառնային, ծովամույն կըլլային կամ եվրոպական պետություններու միջև պատերազմներու ընթացքին կը գրավվեին, իսկ նամակները հաճախ կը կորսվեին: Ահա թե ինչու, եթէ նամակը կարևոր էր, գրողը մինչև իսկ չորս կամ հինգ պատճեններ կուղարկէր տարբեր ճանապարհներով: Նոր Ջուղայի նամակագրության մեջ հաճախակի գանգատ մըն է կողմերեն մեկուն կամ մյուսին թերացումը՝ ընտանիքին լուր ուղարկելու: Այսպես, 1676-ին Փեկուեն (Պիրմանիա) ազգականի մը հղված նամակին մեջ, նորջուղայեցի առևտրական մը կը գանգատեր. «Մալուն լինի³⁰ վալինամաթ,³¹ դու ԺԵ [15] տարի ա գնացել աս, ինչ կասես, ապա քո սիրտն ըռախս³² չկայ խալաւ տր³³ խերու³⁴ գարուդարդու ձեր տեսուն կարօտ մեռաւ մեր ուլալու քոռացել: Տան խիզանն ցամաքել պորրկձած»³⁵: Նամակը կավարտի եղբոր ուղղված կշտամբանքով՝ ո՛չ մեկ նամակի պատասխանած ըլլալու համար: Նույնը կը կարդանք Քանթոն (Չինաստան) ապրող վաճառականի մը ուղղված Թոքաթեն նամակի մը մէջ: «Ի սոյն գրովս սիրելի իմ հինգ գիր եղել, գոր գրեցի եւ յղեցի՝ ծովով եւ ցամաքով եւ ո՛չ մի ամենեւին գպատասխան գրեանցն իմոց ընկալայ, ո՛չ գիտեմ թէ էհաս զանց արարեր, եւ թէ ո՛չ էհաս, այլ զայն դու

²⁹ Տե՛ս հրատարակվող նամակին Գ պարբերությունը:

³⁰ «Թող հայտնի ըլլա» (արաբ. ilm > malum «ճանչցված»):

³¹ Արաբ. Wali'nam՝ իշխան մը, նահանգապետ մը. մեկը, որ իրավասություն կամ հեղինակություն ունի. բարեկամ մը, մոտիկ հարաբերություն մը. wali 'i ni' mat (waliyu 'n-ni' mat)՝ բարերար մը:

³² Արաբ. rahim՝ մեղքող, ներող և ողորմացող. գթասիրտ, ողորմած:

³³ Բարբառային ձև («ալտր»): «Հ»-ն Նոր Ջուղայի բարբառին մեջ «խ» կը դառնա:

³⁴ «Վերջին տարի» (Նոր Ջուղայի բարբառ):

³⁵ Նամակ Փեկուեն, հղված ոմն պարոն Հովհաննեսի, Նոր Ջուղայի կամ Լիվոռնոյի մեջ, պահված՝ Documenti Armeni Busta 2, Archivio di Stato di Venezia (ASV), թղթակալ 2: Քանի որ նամակը Շերիմանյան ընտանիքի թուղթերուն մաս կը կազմեր նախքան ԺԹ դարուն անոնց հանձնումը Վենետիկի պետական արխիվներուն, կարելի է ենթադրել, որ ընտանեկան նամակ մըն էր՝ անոր անդամներեն մեկուն ուղղված: Նամակին ետևի կողմը իտալերեն հետևյալ արձանագրությունը ունի. – “Lettera familiare scritta dalle Indie nell’anno 1676” («Ընտանեկան նամակ, գրուած՝ Հնդիկքէն, 1676-ին»): Նամակին մեջ հեղինակին անունը հիշված չէ:

գիտես, եւ ոչ ես»³⁶: Այս պարագաները եզակի էին, քանի որ ընդհանրապես ընտանիքի անդամները կը հաջողեին իրարու հետ կապ պահել գեթ երկու տարին անգամ մը և հաճախ ավելի կանոնավորապես, նույնիսկ երբ արագ ու հեռու կը ճամբորդեին: Այսուամենայնիվ, ուշացումներու մասին հաճախակի գանգատներ մեզի հասած նամակներէն շատերուն մեջ կը գտնվին, ինչ որ կը հուշէ ԺԷ–ԺԸ դարերուն Հնդկաց օվկիանոսին մեջ հաղորդակցություններու դժվարության մասին:

Այսուհանդերձ, թղթատարական համակարգը էական էր Նոր Ջուղայի ընկերության համար: Գրեթե ամեն երևույթ կախում ուներ սուրհանդակներու ցանցէն: Վաճառականներուն պարագային, հաճախ արագ տեղեկատվության կարողությունը կենսական էր նպաստավոր ներդրում մը կատարելու համար: Հեռավոր Հնդկաստանի գործակալները օրդնագիր (իտալ. ordina «սպասարանք» կամ «պատվեր» + հյ. գիր)³⁷ և հրահանգ կակնկալէին իրենց գործատերերէն Նոր Ջուղայում. երբ դրամի փոխանցումներ պետք է կատարեին, իրենց փոխգիրները պետք է թղթատարով ուղարկէին: Ընտանիքները պետք է իրենց արտասահմանաբնակ անդամներէն պարբերաբար լուր ստանային: Ավելի՛ն. Հնդկաստան ապրող վաճառականները պետք է տեղյակ ըլլային վերջին լուրերէն, որոնք մայր գաղթօջախին հետ կապ ունեին: Այս իմաստով, շահեկան է նշել, որ Հնդկաստան ուղղված գրեթե ամեն գործարարական նամակ ԺԸ դարու կեսին կը սկսի Նոր Ջուղայի քաղաքական և ընկերային լուրերու արագ ակնարկով:

Բայց, ինչպես արդեն դիտել տված ենք, միայն վաճառականները չէ, որ այս ցանցին կը վստահեին: Եկեղեցին նույնքան կախում ուներ այս համակարգէն իր տեղեկությունները հասցնելու համար: Կոնդակներ, օրհնության գիրեր, նվերներ, եկեղեցական տուրքերու վճարումներ, հնդկահայ կրոնականի մը և ջուղահայ առաջնորդին միջև նամակագրություն և, սակաւ պարագաներու, բանադրանքի նամակներ կը շրջեին Ս. Ամենափրկիչ վանքի թեմական կեդրոնին և դուստր եկեղեցիներուն միջև նույն սուրհանդակային համակարգին միջոցով:

* * *

Ստորև հրապարակվող փաստաթուղթը լույս կը սփռէ Հնդկաստանի նոր ջուղայական կյանքի բազմաթիվ երևույթներու վրա, որոնց ակնարկած ենք մեր քննարկումին մեջ: Ան պահպանված է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանին մեջ, «Բենկալայից նամակներ թ. 48» թղթակալին մեջ³⁸: Նոր Ջուղայի Դավիթ վարդապետին ուղղված այս շահեկան նամակը գրված է Չինսուրայի Ս. Հովհաննէս Մկրտիչ եկեղեցիէն Տեր Հարություն քահանայի կողմէ, որ, հավանաբար, առաքված էր իբրև քաղաքի հոգևոր հովիվ 1700–1720-ական թվականներու

³⁶ Այս նամակը պահված է «Սանթա Գաթարինա» նավու թուղթերուն մեջ (Public Record Office, London, HCA 30/682, letter № 1172):

³⁷ Այս եզրին ստուգաբանությունը տե՛ս u e d m u n d H e r z i g. The Armenian Merchants of New Julfa: A Study in Premodern Trade, (PhD. Dissertation, University of Oxford, St. Antony's College, 1991), p. 434.

³⁸ Տե՛ս Լ. և Ն. Մի և ս. Մի և ս. Մի. Դիւան Սուրբ Ամենափրկիչ վանքի. Նոր Ջուղա, 1983, էջ 31.

միջոցին, երբ Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի գաղթօջախները Նոր Ջուղայի թեմին իրավասության տակ դրվեցան:

Նամակը, որ երկու մեծ էջերե (40 x 30 սմ) կը բաղկանա՝ փոքր ու մաքուր ձեռագրով, կը կարդացվի զեկույցի մը նման: Ան օգտակար տեղեկություններ կը պարունակե Պենկալի թեմի տեղական պայմաններուն (ներառյալ Կալկաթայի եկեղեցին ու համայնքը), ինչպես և շարք մը հարուստ առևտրականներու մասին, որոնք նվիրատվության խոստումներ ըրած էին Ս. Ամենափրկիչ վանքին: Նամակը տեղեկություններ կը պարունակե Պենկալի նորջուղայեցի առևտրականներու դերին մասին որպես տեղական եկեղեցիներու հովանավորներ ու Ս. Ամենափրկիչ վանքի նվիրատուներ և ցույց կու տա, որ հովանավորչական այս դերը, որ էսպես կարևոր էր առևտրական ցանցին մեջ սփռված եկեղեցիներու պահպանումին համար, Նոր Ջուղայի եկեղեցական նվիրատվության մնայուն միջամտությամբ ու պնդումներով հառաջ կը տարվեր: Նամակը կը հաստատե, որ այդ ցանցը կենսական դեր մը խաղացած է Չիչրայի բնակիչները Նոր Ջուղայի իրադարձություններուն հաղորդ պահելով: Օրինակ, նամակին ընթերցումեն կիմանանք, որ հեղինակը՝ 1727 թ. Պենկալեն գրելով, արդեն տեղյակ էր 1725 թ. Օսմանյան կայսրության ուղղված պարսկական դիվանագիտական պատվիրակության արդյունքին, ուր հանրաձայնորեն նորջուղայեցի մը կարևոր դեր խաղացած էր: Ան նաև տեղյակ էր կաթողիկոս Աստվածատուրի վախճանումին Ս. Էջմիածնի մեջ, հիշյալ դեպքեն շուրջ տարի մը ետք:

Պենկալի հայ գաղթօջախներու տնտեսական պատմությամբ հետաքրքրվողներուն համար, նամակը քանի մը կարևոր նշումներ ունի Չիչրա Չինսուրայի հայ համայնքի առևտրական վայրէջքին մասին՝ 1720-ական թվականներուն, որպես ուղղակի հետևանք Կալկաթայի դրացի անգլիական բնակավայրի վերելքին: Այս տեղեկությունը խնդրո առարկա կը դարձնե Ս. Սեթի ավանդական պատումը Պենկալի հայ վաճառականական համայնքին մասին. «(...) երբեմնի ծաղկյալ Չինսուրայի հայ համայնքը... հայերե պարպվեցավ, երբ կորսնցուց իր առևտրական կարևորությունը և անոնք [իմա՝ հայերը] իրենց գործունեությունը Կալկաթա փոխադրեցին վերջին [իմա՝ ԺԹ.] դարու կեսին շուրջ»³⁹: Նամակը, ընդհակառակը, կը նշե, որ Չինսուրայի համայնքի առաջատար անդամները արդեն լքած էին իրենց երբեմնի բարգավաճ բնակատեղին և մեկնած՝ Կալկաթա, 1720-ական թվականներուն: Ըստ նամակին, ասոր գլխավոր պատճառներն էին Կալկաթայի Ֆորթ Ուիլիլմի անգլիական գաղութին աճը և 1724 թ. Ս. Նազարեթ հայկական եկեղեցիին շինությունը: Նամակը արժեքավոր տեղեկություններ կընձեռե ցարդ անձանոթ, Կալկաթայի հայկական եկեղեցիին շինարարությունը հովանավորող վաճառականին ինքնության մասին⁴⁰: Նամակը, վերջապես, շահեկան է լեզվական տեսանկյունեն՝ որպես Նոր Ջուղայի բարբառի արտահայտություն: Ըստ ԺԸ դարու սովորություններուն, նամակը անկանոն կետադրություն ունի և

³⁹ M. S e t h. Նշվ. աշխ., էջ 306:

⁴⁰ Տե՛ս ծանոթ. 42:

պարբերություններու բաժնված չէ, սակայն ձախ լուսանցքին վրա թիվեր ունի՝ տասներեք հատվածներ նշելու համար:

Նամակին վերև գրված 1721 թ. բացահայտ սխալ մըն է: Այս նամակին գրեթե նույնական պատճեն մը կա միննույն թղթակալին մեջ, հայկական ՌՃՀԶ (1176 = 1727) տարեթիվով թվագրված: Կալկաթայի հայկական եկեղեցիին շինության ակնարկությունը (կառուցված՝ 1724թ., ըստ հեղինակներու մեծ մասին⁴¹) ցույց կու տա, որ ուղիղ թվականը 1727 է:

Բնագրային ուղղագրությունը պահպանված է նույնությամբ:

Երջանիկ եւ սրբայնուէր քահանայապետի եւ հովիւ հոգեւոր
ի Տանն Աստուծոյ տեառնոյ Դաւիթ աստուածաբան վարդապետի

Գրեցաւ թվին ՌՃՀ-ումն [1170=1721]

Ա Հռչակելի փառաւորութեամբ գերագոյն փառաց պատուոց նախայգահեալ տեառնոյ Դաւիթ աստուածաբան վարդապետի բարբունապետի, որ եւ ես յետնեալ նուաստս աստուստ իբր մօտու ծընրահանգուց գագաթեամբ զգլուխս ի վայր խոնարհեցուցանելով եւ ի ծունկս անկեալ՝ ըղձայփափաք համբուրելով զգարշաբար ոտիցդ, զոր թախանձանօք հայցեմ եւ աղաչեմ իբր զծառայ զտեարդ իմ, հարցանելով զգլուխդ հանուրց ազգիս, զոր տէրն բոլորից պահեցէ զգլուխն ամենեցուն Քրիստոս Աստուած մեր. նա եւս խնդրեցես ի յԱստուծոյ ձերունի հայրդ իմ հոգեւոր վասն բարիօք կելոյն ծառայիտ աստ եւ ի հանդերձեալն, զի լսէ տէր զկամս երկիւղածացն եւ կատարէ զխնդրուածսն եւ ես՝ ... ցանգ եւ յաւեժ աղաչեմ զԱստուածն բոլորից, որ եւ զիս ի սփիւռս հեթանոսաց անսա[յ]թաքելի պահեցէ, պարզ երեսօք եւ անամօթ մնայցեմ, միւս անգամ արժանի լինիմ եւ լսեմ զերանաւետ ձայն սրբազանին, որ ասես՝ եկ ծառայ իմ, եւ լինեմ արժանի համբուրելոյ զգարշապար վեհին:

Բ Ձոր տէր Յիսուս արասցէ արժան. եւ ընդ ծառայական նուիրառս յայտնի լիցի սրբազան վեհին, որ հրամանուցդ արհնութեան նամակն ի թվին ՌՃՀԴ [1174=1725] յունիսի ԺԸ-էն [18] գրեալ յերկրիս հասարակ քահանայից եւ ժողովրդեան վերայ թիւն ՌՃՀԵ [1175=1726] թիրայ Է-ումն [7] Մաղրասէն տէր Միմօնին ձեռքն մեզ էհաս, ուրախութեամբ եւ համբիրիւ ընկալաք եւ հրամանուցդ սուրբ արհնութեանն տիրացանք եւ ի մէջ սուրբ եկեղեցումն ի մէջ ժողովրդեան ընթերցաք, ամենեքեանս փառս Աստուծոյ մատուցաք եւ հրամանուցդ սուրբ աթոռ նստիլդ շնորհաւորեանք եւ բազում ուրախութիւն արարաք եւ յետոյ լուսայիռօքի եւ ի Քրիստոս հանգուցեալ Սոփսէս վարդապետին միմեանց միսիթարեցաք եւ հոգւոցն ասացաք, ի ձեռն պաշտմամբ եւ պատարագօք եւ նորին կենդանի աղօթքն մեզ օգնութիւն կօչեցաք, որ եւ բարեխօս լիցի առ Քրիստոս Աստուածըն մեր, որ եւ մեզ ողորմելոցս ողորմեսցի, ճար եւ օգնութիւն հասցի՝ որ այս տառապանաց եւ պանդխտութեան ազատիւք, զամբ համբուրեմք զգարշապար ձերու-

⁴¹ Sté u M. S e t h. Նշվ. աշխ., էջ 429. A n n e B a s i l. Armenian Settlements of India. Calcutta, 1969.

նի վեհի. եւս հրամանուցոյ այտ ծերութեան ժամանակին եւ էս խրթին եւ դառն ե-
ղանակումն մեք մեղաւոր գոյով խնդրեմք, որ ամենայսուրբ հոգի Աստուածն
հրամանուցոյ ամենայգորութենէ օգնէ, կարողացուցէ եւ հաստատ հիմն արաս-
ցէ, որ Մայր Սուրբ Աթոռոտ հաստատ, շէն եւ աւատան պահեցես, հայր սուրբ,
ամենայկարողն Աստուած ամենայգոր զօրութենէ հրամանուցոյ պահեայ, որ մինչ
ի վիճակիտ եւ թէմիտ վերայ առաջնորդ հաստատեաց՝ զրա հրամանուցոյ թէմն
եւ վիճակն սուրբ Ամենայփրկչի վանուցոյ եւ Ջուղայու վերայ էր, մեք ամենե-
քեանս փառս Աստուծոյ մատուցինք եւ գոհացանք զԱստուծոյ, որ հրամանուցոյ
Միմէօն ծերունոյ նման պահեաց մինչ ի սուրբ Աթոռոյ ընկալար, շնորհաւոր լինի,
տէր Յիսուս հրամանուցոյ կարողութիւն պարգեւի, որ զհօտրդ բարեկենցաղ կա-
ռուարեցես ի փառքս Աստուծոյ.

Գ Եւ այլ յայտնի լիցի, որ վասն ողորմութեան սուրբ Տանդ նուէրքի եւ օգնու-
թեան համար էիր շնորհ արարեալ. հայր սուրբ, տեղս այլ այնպիսի կենդանի
մարդ ոչ գոյ, որ մին արդիւնք եւ նուէրք ունենայ. ամենեքեանն այլ ուրեանց
խղջութեան եւ ուրեանց կենցաղայվարութեան հոքս ունեն՝ թէ որպէս լիցի իւ-
րեանց կենդանութիւնն այս դառնացեալ ժամանակիս, որ ամենից կողմանց աշ-
խատութեան դուռն խափանվել է. ամենեքեանն այլ պաշարած մնացեր են. տեղս
Գ [3] կենդանի մարդ գոյ, որ փող կայ ձեռներանումն. թէ չէ այլքն ամենեքեան
ձեռն ծոցի պաշարաց կան. մէկ պարոն Աղայ Նազարն է՝⁴², որ հրամանուցոյ
աւրհնութեամբն ունի անուն, ունի յերես եւ Աստուծոյ տուած ունի դօլվաթ⁴³: Նա
էսօր Կալկատու եկեղեցին հաստատեաց. մօտ ԷՏ [7,000] ըրուփի խարճ էլ⁴⁴ դե-
ռեւս խարճում է եւ շինութիւն շինում. նորանէ խօսվ չի լինել եղանակումս ողոր-
մութիւն ուզել. մեք ակն ունէինք, թէ տարումս Պարոն Նազարին մէկ մեծ աւրհ-
նութեան թուղթ կու գրէիր, որ գիրն կարդայր՝ աւրհնութիւնդ առնէր եւ ուրախա-
նէր: Եւ կու խնդրեմ սրբազան վեհէն, որ տարօջս մին աւրհնութեան թուղթ գրես
Պարոն Նազարին եւ Բ [2] եկեղեցին⁴⁵ այլ յանձնես ուրեւ, որ Չիչրուս եկեղեցին
այլ հոքս քաշէ: Լուսայիոզի Սօվսէս վարդապետին⁴⁶ ժամանակին այլ եմ ազ-
դումն արարեալ, թէ՝ Չիչրուս եկեղեցուն հոքսն արարէք, որ ձեռաց գնացել է եւ
ժողովուրդէն էլ, ինչ կայ, գնացել են Կալկաթայ, մին քանի աղքատ տնայդեր այ
մնացել տեղս: Գլխաւորն Ուլուխանն էր,⁴⁷ առ Աստուած փոխեցաւ⁴⁸, եւ միւսանին

⁴² Այստեղ հիշված Ս. Նազարեթ եկեղեցիի հովանավոր պարոն Աղա Նազարը, ամենայն
հավանականությամբ, Աղա Նազար Հակոբջանն է, 1740-ական թվականներուն Մատրաս մա-
հացած նորջուղայեցի վաճառականը, որ մեծ հարստություն մը կտակած է իր քրոջ ամուսնույն՝
խոջա Դավիթ Սուլթանին: Աղա Նազար Շահամիր Շահամիրյանի մորեղբայրն էր:

⁴³ Արաբ.-պրսկ. dalwa/dalva (հարստություն):

⁴⁴ Արաբ.-պրսկ. kharaj (ծախս):

⁴⁵ Երկու եկեղեցիներու այս նշումը Չինսուրայի Ս. Հովհաննէս Մկրտիչ և Կալկաթայի Ս.
Նազարեթ եկեղեցիներուն կը վերաբերի, որոնք հաջորդաբար կառուցված էին 1695 թ. և 1724թ.:

⁴⁶ Նոր Ջուղայի առաջնորդ՝ 1706-1724 թթ.: Տէ՛ւ Վ ա շ կ ե ն Գ հ ո ս ս ի ա ն. The Emergence
of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century. Atlanta Georgia, 1998, էջ 293.

⁴⁷ Անձանոթ բառ (թերևս թուրքերէն սև «բարձր, վսեմ» և պարսկ.-թրք. khan «ղեկավար»): Բառը,
հետևաբար, կրնա պատվանուն մը ըլլալ՝ «ավագ վաճառականներու ղեկավար»-ի իմաստով:

հաց եւ չուր մեզանէ են ուզում: Եւ Չիչրուս սովորայգարերն գլխաւոր մին Նագարէթի որդի պարօն Լիօնն այ եւ Մահակի որդի Մինասն, որ Շարիմանէնց պարոն Մանուէլին եւ պարոն Յարութիւնին⁴⁸ յընկեր ան: Սոքայ հրամանուցոյ յայտնի. եւ մին սովորայգար այլ Միրգայջանի որդի պարօն Մարգարն է, որ Խալտարէնց պարոն Պետրոսին յընկերն ա: Էս տանս եւ մեզ՝ քահանայիցս, մին օգնութիւն անում՝ թէ մումի, ձիթի եւ եկեղեցոյ ըսպասավորութեան էլ ոնչով էս տանս հոքս անող չկայ: Հայր սուրբ, վասն այն կու խնդրեմ, որ պարոն Նագարին մէկ լաւ արհնութեան թուղթ գրես եւ Բ [2] եկեղեցին էլ ուրեն յանձնես. Կալկաթունն ինքն այ շինել, էնտուր⁵⁰ հոքսն բարի սրտով կու հոքայ, Չիչրուս եկեղեցին էլ ուրեն յանձնես, որ էստուր այլ խնամք ածէ. գրայ⁵¹ փէտերն ողջ փթել այ. տարիս անցաւ միւս տարումն փէտեր ողջ վեր կու ընկանի.⁵² հոքսն անող չկայ, Քոյ սուրբ այն վկայ, որ էսօր Դ [4] տարի այ, ինչ ինձ եկեղեցական դատամարթ է⁵³ գոլման⁵⁴, ողջ էս սուրբ տանս վերայ խարջում եմ, այս տան հոքսն քաշում, թէ ինչ այ՝ այլագգից միջում նախատինք չկրեմք, թէ՛ Հայոց ազգ են, յերկրումս եկեղեցի ունին, կարեցան ոչ պահել: Հայր սուրբ, այսչափ աղաչանս է. Քո հրամանուցոյ յա[յ]տնի լինի, որ յերկրումս կենդանի մարդ չկայ, որ թէ Սուրբ Աթոռիտ եւ թէ էս Սուրբ Տանս

⁴⁸ Չինսուրայեն գրված նամակներու մեջ որպէս պաշտոնյա հայ համայնքին նշված է «ուլուխանն ու միւթավելին, ինչպէս եւ քէտխուտան»: 1713 թ. Չինսուրայեն գրված նամակի մը մեջ հետևյալը կը կարդանք. «մութավելին [պրսկ. mutaveli «գթութեան հաստատութեան մը խնամակալ»] ժողովրդոց մասպահարթով [պրսկ.-արաբ. «շահ»] պարոն Եղիկարն ա, որ է մեր թարվեզեցի Մելքոնի որդի. ԻԵ [25] տարի այ օր տեղս այ տնաւորվել այ, լէվի ստակ քաթիտուղ մարթա. Բ [2] տարի այ, որ մութավելի այ»: Պարոն Եղիգար Չինսուրայի բնակիչ եղած էր ավելի քան 20 տարի, ինչ որ կը նշանակէ, թէ հոն հաստատուած էր 1690-ական թվականներուն սկիզբը՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու օծումէն առաջ: Ուլախանը, սակայն, այստեղ, ամենայն հավանականությամբ, անձնանուն է:

⁴⁹ Մանուէլ և Հարություն Շահրիմանյան Նոր Ջուղայի ամենահարուստ հայ կաթողիկէ ընտանիքին անդամներ էին: Այս ընտանիքէն մեկ ճյուղը գաղթած ու հաստատված էր Իտալիա 1698-ին, իտալական բազմաթիվ քաղաք-պետություններու և Ավստրո-հունգարական կայսրության կողմէ կոմսության տիրոջ արժանանալով: Պարոն Մանուէլ և պարոն Հարություն մնացած են Նոր Ջուղա ԺԸ դարու առաջին կեսին: Մանուէլ 1725-ին Օսմանյան կայսրության ղրկված պարսկական դիվանագիտական առաքելության քարտուղարը եղած է, իսկ ավելի ուշ՝ Ռուսաստանի մոտ պարսկական դեսպանը (տե՛ս ընտանեկան ձեռագիր կենսագրությունը F o r - t u n a t o S c e r i m a n. Brevie Memorie sulla famiglia Sceriman, Mss. Cod Cigogna [Nº.3403], և “Resultado del Processo per la verificación de Requisitos alla N. V. nella famiglia de Co. Fr[at]elli Sceriman”, որոնք պահպանված են Վենետիկի Գոռեր թանգարանի (Museo Correr) գրադարանին արխիվին մեջ: Հարություն Շահրիմանյան Նադիր շահի հրամանով 1747թ. հունվարին ողջակիզված է Սպահանի մեջ: Երկու եղբայրները, ըստ երևույթին, այս ժամանակաշրջանին առևտուր կ'ընէին Պենկալի մեջ, ինչպէս կը թելադրէ այս տեղեկությունը:

⁵⁰ Էստուր/էնտուր - ասոր, անոր (Նոր Ջուղայի բրբ.):

⁵¹ Պրսկ. zira - (որովհետև, ի հաշիվ, քանի որ):

⁵² Այսինքն՝ վայր կ'ընկնի:

⁵³ Պրսկ. daremad (շահ, եկամուտ):

⁵⁴ Նոր Ջուղայի բարբառի մասին տե՛ս Հ. Աճառյան. Քննություն Ջուղայի բարբառի. Երևան, 1940: Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն. ուրուագիծ եւ դասակարգություն հայ բարբառների բարբառագիտական քարտեսով. – «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկվա–Նոր Նախիջևան, 1911, էջ 89:

հորսն քաշէ. եւ ակն առ հրամանուցոյ սուրբ աղօթքն ունիմք, որ նախ Սուրբ Աթոռոտ եւ ապա այս Տունս հաստատ մնասցէ, որ այլասագից միջում ամօթ չկրեմք:

Դ Դարձեալ յայտնի լիցի, որ տեղիս խոստմունքի եւ նուէրքի հարմար էլ հրամայել Դ [4] տարի է, որ տեր Նիկողոսն Չիչ[ր]այ թողէլ է, գնացել: Կալկաթայ յառաջն ինչ խոստմունք որ ելէլ այ, ուր ձեռնումն, լուսայիոցի Սովսէս վարդապետին քանի գրով ազդ եմ արարեալ, ապա իմուս ժամանակին այս է, որ Ուլուխանն վասի էր արարել՝ Սուրբ Ամենայփրկչի վանքին գրել էր ԱՃԺ [110] յ ի քանդայ յինք առի եւ մին Յովանէս անուամբ տղայ կայր տեղս, նա եւս վանքին Ձ [90] յի ասացել պարոն Մարգարն վաքիլ այ, զայն եւս յինք կատու. Սրբազանիս ԲՃ [200] յի կու լինի տեղս, եւ մեր տարէն Բ [2] թօման այլ կու շինեմք, ինչ լինի գրուս յետոյ՝ վեհին կու գրեմք եւ կու ուղարկեմք հրամանուցոյ: Հայր սուրբ էն ակնկալութիւնն ունի, թէ ողորմութիւն լինէր՝ տարումս մին Բ [2] քահանայ ուղարկեր, մէք գայինք հրամանուցոյ զարշայպարն համբուրենք: Երեւում այ, որ դառ ճանայարէրն կապ այ, ձեռնտու չէ էլէլ, որ քահանայ ուղարկես տարուս մովսումիցս, այլ մնացինք տեղերս:

Ե Եւ այլ յայտնի լիցի, որ հրամանուցոյ արհնութեան գրերն, որ քանդիս վերայ գրել էր եւ նախատինք առ տեր Նիկողոսն, գրերն ուրեն ցոյց տվի. վանուց փողին եւ ուր տարէն Բ [2] թօմանն ուզեցի, ասաց թէ պարոն Գասպարին ձեռնովն Բ [20] թօման փող ամ աղարկել, մին գիր հանեց ցուց արեւտ, թէ Պասրայ պարոն Գասպարն տվել այ եւ հրամանուցոյ գիրն, որ գրել էիր Պասրայ պարոն Գասպարին թէ Մուքէլի որդի պարոն Յարութիւնիցս Բ թօման յինք առի, բարաթ գրեցի, որ Պասրայ պարոն Գասպարդ տաս Շատուրի որդի պարոն Ջընթլումին, եւ պարոն Գասպարն հրամանուցոյ գրին յերեսն վեռէլ էր, տեր Եղնայգարին մրէլ տվէլ ուղարկէլ տեր Նիկողոսին ձեռն, թէ տեղս էս, երբ տեր Նիկողոսն էս գիրն նշանց արեւտ, ասացի՝ բարի այ, էսօր Ժ [10] տարէ տեղէքս աս, էտ քոյ տարէն փողն ապա վանքինն: Ասաց ԺԵ [15] թօման այլ մահտեսի Յովանիսին ձեռնովն ամ ուղարկէլ. էստուր գիր չունէր:

Զ Բանդայ այլ խօսեցայ, ոչ ախտիար հրամանուցոյ այ: Եւ այլ յայտնի լիցի հրամանուցոյ շնորհալի արհնութեան թուղթն, որ արգ պարոն Լիոնն եւ պարոն գրելիր վասն եղբօրդ ընչին վաքիլ էք արարել, գիրն հասաւ ուրէնցն. նախ հրամանուցոյ ահնութիւնն ընկալան եւ ապա գրոյ զօրութիւնն վերայիասու ելան. իւրեանքն հրամանուցոյ գրեցին, եւ քանդայ այլ փոքր ի շատէն գրեմ, որ էսօր պարոն Թարխանն տեղէքս յերկնքումն աստղ չունէ, ումիտ Պարոն Նազարն այ: Պարոն Նազարի եւ պարոն Թարխանի մէջն մեծ գրուց ընկել, ամեն գրում լուսայիոցի Սովսէս վարտապետին ազդ եմ արարել. սա պարոն Թարխանն եւ պարոն Նազարն իւրեանց խսէպն իւրեանց միջումն տեսէլ են եւ գիր շինել:

Է Մեզ կանչեցին, գրերն երկքնոց իւղարովն մօհրեցինք, որ ԽԵՌ [45000] յի պարոն Նազարն սանատ գրէց, արեւտ պարոն Թարխանին, որ մինչի Ա [1] տարի վաղայ, որ ընկերայգիրն տայ՝ ուր փողն յինք առու. էս կերպն կտրվացք ելավ, երկուքն այլ դապուլ արարին, յետոյ պարոն Թարխանն շուտ արեկ, թէ՛ էս նորմէ խսեպ կուզեմ. էս զօֆդուգուին վերայ էս քանի տարին էսպէս մնաց: Էս տարի պարոն Նազարն փողն կապեց տարաւ եղիր Ինկլիզի կունսպանումն՝ թէ էս էն

մարդին սանատ ամ տվել, փողն տեղս մնայ: Իմ ընկերայգիրն բերի՝ ուր փողն տանէ. Բնկլիզին մեծն մեզ կանչեց թախեխ արար, որ խսեպն կտրել ան, ֆարխաթի ան շինել. Թարխանին ջուղապ արետ սասաց. դու քոյ ձեռն կտրել աս, էլ Պարոն Նազարին խետ բան չունես, քո փողն մեր կուսպանումն այ, քոթումս կու պահեմք մինչի Պարոն Նազարին ընկերագիրն բերէք եւ Գ [3] ախբեր մին տեղ տեղս հազիր էլէք ձեր, փողն յինք առէք. փողն մնաց քոթումն եւ ուրենքն պաշարած եւ պարտայտէրք հայ հրնդու պարոն Թարխանին նեղացանում մինչի ուրեն այլ խառջի չունի՝ սրուրն խառջի առե ջումիաթով մասլահաթ արարինք. պարոն Լիոնն, պարոն Խաչիկն, բանդայ, որ մին ֆիքր առենք պարոն Նազարիցս շեն կամ լեն ըլթմագ առենք էտ փողին քարսագին լինի: Բանդայ եւս քանի անգամ գնացել ամ Կալկաթայ. պարոն Նազարին աղաչել ամ, որ հրամանուցդ խաթեր խմար մին ֆիքր առէ եւ հրամանուցդ արհնութեան թուղթն, որ արգ պարոն Նազարն գրէլ իր՝ ուրն հասաւ. լինի որ Աստուծով շինեմք՝ որ մին ճար լինի էտ փողին հոքս առէ. եւ էլ ինչ հրամանուցդ սուրբ աղոթքն առաջնորդէ բարիայ կու լինի: Եւ այլ յայտնի լիցի, որ քալանթար Աւետի որդի Յովանէսն տեղս թիվն ԱՃԺԱ համիրայ Է [7] ունն առ աստուած փոխեցաւ: Կարի յոյժ պարտական վալանդիզի հայի եւ քուրդի մինչի ԵՌ [5000] յի պարտք ունե եւ ԱՌ [1000] յի թանխայ ցաք ցրիւ տեղ որ Աստուծոյ է գիտելի դուս գոյ թէ ոչ նայ եւս էս կերպն դառն ողորմելի աշխարէս գնաց շատ մարդի պարտական, Աստուած ուր հոգոյն ողորմի:

Ը Եւ այլ յայտնի լիցի, որ պարոն Մանուկին որպիսութիւնն կամիս իմանալ՝ տեղս այ. հրամանուցդ սուրբ աղոթիքն չաղժիր եւ հրամանուցդ սուրբ աչն կու համբուրէ. ինքն իւր զլուխ այ, մարդի բայբաստայ չէ. Աստուած ուրն անփորձ պահէ իւր մեհնաթին, ուր աշխատանքի ֆրումն այ, որ ուր խիզանիցն շարմանդութիւն չքաշէ. Աստուծոյ տուածն քանի Ը [100] յի ուր ձեռնումն ունի տեղեքս արան կանի խրիտ կու գնայ. ուրն խմար խրիտն կառէ կու բերի. ֆրանկսիսի կու ծախէ ինչ ուր նսիպ լինի. Աստուած ուր կարողութիւն տայ. լէվ մեհնաթ է առում. Աստուծով լէվ կու լինի, եւ սուրբագան վեհին գրէրն արեկ, ինքն Արանկում էր, գրէրն խասացուցի ուրն, կարդացել էր. Արանկէ արեկ գրէրն բանդիս նշանց արետ: Ֆրում կայ, որ տարումս խիզանին խմար խառջուղ ուղարկէ, աստուծով որ կաղարկէ. սրբագանին աղոթքն ուրն եւ մեզ օգնութիւն խասանէ, ճանայպարէրն բացվէ գամք հրամանուցդ գարշայպարն համբուրեմք: Քոյ սուրբ աչն վկայ, որ գրեանքն կարդացել ամք եւ դառն արտասուօք լացել. տառապանքն եւ նեղութիւնն որ մեր սիրելիքն քաշում են: Եւ հրամանուցդ ծառայ ժամարարն եւս էր գրել, թէ ոչ մեզ օգնող կայ եւ ոչ մին դիան մեզ խառջի տրւող: Հայր սուրբ, լինի օր մի, որ փրկութիւն եւ ողորմութիւն խասանի մեր խեղճ ողորմելի խիզանին, որ մին դիւրութիւն գտանեն, եւ պարոն Մանուկին կողմանէ միամիտ լէր Աստուծով չաղ է եւ առողջ, հրամանուցդ սուրբ աչն կու համբուրէ. ինքն այլ հրամանուցդ գիր է գրեալ:

Թ Ուր յանգանքն յայտնի կու լինի. եւ այլ կու խնդրեմ հայրագութ ողորմութենէտ, որպէս լուսահոգի Մովսէս վարդապետն գութն եւ ողորմութիւնն մեզ վերայ ունէր, հայրդ հոգեւոր այլ ողորմելոցս ողորմիս, գութըդ եւ հայրայխնամ սերտ մեզ նուսատիցս վերայ պահես, եւ մանաւանդ ի պարապ ժամու. ժամարա-

րին խապարն առնուս, որ խիստ էմք անտէր, մեր տէարն էւ գլխաւոր թէ հոգեւոր էւ թէ մարմնաւոր հայրն հրամանքդ էս, չլինի ծառայքդ մոռանաս. հայրայինամ գուր շարժես ծառայիցդ վերայ:

Ժ Եւ այլ յայտնի լիցի սուրբայգանին, որ էս Մովսումիս Բասրուց խապար է-
հաս, թէ աղուանին էլչին, որ գնացեր է Հոմաստան, անարգանօք դուս ան արա-
րել, էւ էլչին յետ դառցել էկել Բաղտատ. փաշէն ուրայնօքն բռնել բանդիսան այ
սովել. պարոն Մանուէլն էւ քանի ջումիաթ, որ խորուրանօցն էլել ողջոնցն այլ
բռնել էւ ինչունեց էլ ան զաֆտել. էւ Բաղտատու փաշէն վերկացել Բսպահանայ
վերէն, որ գոյ յերկիրդ⁵⁵. էւ համբան լսեցինք, կրկնայպատիկ սուք դարայժամ
եկն մեզ վերայ. ամէնից կողմանց դառնութեան լուր էւ համբաւ կու լսեմք:

ԺԱ Տէր Յիսուս մեր խեղջ ազգին օգնութիւն խասանէ էւ այլէս լսեցինք, թէ
սրբագան վեհայպետ կաթողիկոսն առ Աստուած փոխուել էւ Անկիրիոյ Կարա-
պետ վարդայպետն յաջորդել՝ կաթողիկոս նստել. գրուցս բերանօք է էւ ոչ գրով,
էւ սուրբայգան վեհդ ոչ ինչ չէիր գրեալ. սուտն էւ իրան չգիդեմք. խապար էսպէս
լսեցինք, ապայ մէք մինչի թարիդս Աստուածայտուր կաթողիկոսն կու յիշատա-
կելք մինջէւ որ սուրբայգան վեհն գրէ որպէս հուքմ լինի՝ այն է իրան.

ԺԲ Եւ այլ յայտնի լիցի սուրբայգան վեհին, որ էս Մովսումին հրամանուցդ
փողին խամար շատ թլաշ արարի, թէ աւաք վերառող լինէր. աւաք տէ..խով էլաւ
ոչ. էւ Բասրայ ալ էս տարի, ջումիաթ էլ չգնացին վասն յերկիրդի, որ էսպէս
...գրուցանիք լսելոց անճառացայ. Ա (1) խակ ուրանկ շահի առի Բնկլիզի նավում
բառցի. ուղարկեցի Բասրայ մեր յերեւանցի Յոնփրիոսի որդի պարոն Ամիրադէ
Աղայվալէ որդի պարոն Մարտիրոսին էւ Ղեռնդի որդի պարոն Մուրատխանին
ձեռն, որ նոքայ տեղն ձախեն, արասուն թօման փող Հրնդուի առէն, որ Բսպահան
Շարիմանէնց Սուրբէլի որդի պարոն Յարութիւնն էւ կամ Խալդարէնց ողորմա-
հոգի Յովանէսի որդի պարոն Պետրոս աղէն սօցայ երկքնոցն՝ որոցն որ խէրիաթ
տեսնեն, գիրն ուղարկեն հրամանուցդ ձեռն, որ հրամանքդ փողն յինք առուս,
քսան թօմանն վեռուս էւ Ժ թօմանն ողորմութիւն առես տաս ժամարարին էւ իմ
պառաւ մօրն, որ իւրեանց խղջութիւնն հոգան էւ պարտք ունեն տան: Հայր սուրբ
հրամանուցդ փողն Ժ թօման Ուլուխանին էւ Յովանէսին խոստմունքին կողմա-

⁵⁵ 1725 թ. Օսմանյան կայսրություն ուղարկված պարսկական դեսպանության մեջ Մանուէլ Շեհրիմանյանի դերի մասին տե՛ս Gian Pierro Bellingeri. Sugli Sceriman Rimasti a Giulfra: Devozione Agli Ultimi Safavidi? – “Gli Armeni e Venezia: Dagli Sceriman A Mechitar, Il Momento Culminante di una Consuetudine Milenaria”, a cura di Levon Zekian e Aldo Ferrari, Venezia, 2004, pp. 93-124. Laurence Lockhart. The Fall of the Safari Dynasty and the Afghan Occupation of Persia, Cambridge, 1958, p. 282. Judasz Tadeus Krusinski. The History of the Late Revolutions of Persia: Taken from the Memoirs of Father Krusinski, Procurator of the Jesuits at Ispahan... Done into English from the Original...by Father Du Cerceau, London, 1733, vol. 2, p. 185: *Դեսպանության մասին Քրուզինսկի գրած է. «Անոր [Շահ Աշրաֆի] ընտրած անձը այս դեսպանության համար աֆղան մըն էր, որ ջորեպանէ բարձրացավ գնդապետի աստիճանին: Բայց որովհետև նման տեսակի մարդ մը շատ հարմար չէր բանակցություն մը վարելու համար, ան իրեն միայն դեսպանի տիտղոսը տվավ և իրեն կցեց Մանուէլ Շահրիմանը՝ այդ անունով ընտանիքին գլուխը, ամենէն ազնվականն ու նշանավորը Ջուդայի բոլոր ընտանիքներուն մեջ, գործելու և բանակցելու անոր նպատակներուն համաձայն Մեծ Պարոնին [Սուլթանին] նախարարներուն հետ» (էջ 185): Դեսպանության ձախողության մասին տե՛ս էջ 190:*

նէ այ եւ ժ թօմանն իմ տարէն Բ [2] թօմանի կողմանէն այ: Խնդրեմ հրամանուցող հայրայգութ ռդորմութենէն որ ներումն շնորհես եւ արհնութիւնդ միշտ ձառայիդ վերայ պահես: Քո սուրբ աչն վկայ, որ իմ կենդանութիւնն հրամանուցող սուրբ արհնութեամբն այ, եւ մեք սուրբ տանդ ձառայ եմք՝ ոչ թէ միայն մեղաւորս, իմ պապն եւ իմ հայրն եւ մեք արհնութիւն սուրբ տանդ ունեմք եւ միշտ պատրաստ եմք ձառայութեան: Ապայ էս ժամանակիս կարողութիւնս էտ եհաս, խնդրեմ շնորհես, կենդանի մնամ գարշայպարդ համբուրեմ եւ սուրբ հօրս արծաթայգին ծառայոց նման ծառայեմ:

ԺԳ Եւ այլ յայտնի լիցի սուրբայգան վեհին, որ տէր Ըստեփաննոսին տարէն Բ [2] թօմանին խամար հրամանուցող շնորհալի արհնութեան թղթովն ուզեցի ասաց Մովսումին կտամ եւ ինքն գնաց Մախսուտայպատ, չուն որ տեղն ժողովուրդ շատ կային, ամէնքն այլ էն Արանկինն գնացել տեղս դարտակուել էր, էսպէս խորհուրդ արարինք, որ մեղաւորս տեղս մնամ, եւ ինքն գնաց տեղն որ ժողովուրդք միշտ պատարաք տեսնեն, եւ երբ Արանկէ արեկ՝ էր յունվարի Դ [4] նավերն վեր կալման, որ լանկար են⁵⁶ քաշել, գետիցն դուս ելել, որ էլ օր չէր մնացել, որ ֆիքրի արարելըն առի եւ բանդայ էլ շատ բէջիթ ելալ⁵⁷. փողն ուզեցի՝ լինէր որ մին կերպ էլ արարել ուղարկել, արետ ոչ. ջուղայ էս արէտ, թէ ես իմ տանի գրումն գրել ամ իմ խոր, որ տեղն տայ. ինչեիցէ սա էլ առէտ ոչ: Հայր սուրբ, յանդրութիւնս ներես, որ ով ոք Բանկալ այ եկել ջումիաթէ հրամանքդ տեղդ հարցանես. էստուր էութիւնն հրամանուցող կու պատմեն. էս թէ Բանկալայ մուլք բի վարիս, տեղս ամեն մարդ ինքնայգլուիս այ, ինչ առէ էլ ոնչ ով հարցանող չկայ՝ ոչ մեծ կայ, ոչ փոքր. ամեն մարդ ուր կամքովն մին իշխանութեան տէր այ. էլ մեծաւորի հրամանի ականջ դնող չկայ: Յայտնին գրեմ հրամանուցող, որ ոնչով հրամանուցող գրին ականջ չէ դնում. տէր Նիկողոսն Կալկաթայ էպիսկոպոնց նայխով էնպէս ջուղայ արետ եւ տէր Ըստեփաննոսն էսպէս: Եւ գիտեմ իւրեանքն այլ հրամանուցող յատուկ գիր են գրեալ, յայտնի կու լինի, ախտիար⁵⁸ վեհինն է. եւ այլ այնպէս յատուկ աֆալ⁵⁹ չունի, որ վեհին ազդումն էի արարեալ: Եւ սրբագան վեհէն ներումն եւ ողորմութիւն կու խնդրեմ, որ գրուս երկարայբանութեանն եւ սխալանացս ներումն շնորհես եւ ծառայիտ մեղացն թողութիւն խնդրես եւ սուրբ արհնութիւնդ անարժանիցս անպակաս լիցի, քանզի ծառայ քոյ եմ, տէր Յիսուս արժանի արասցէ զգարշայպար վեհին համբուրիցեմ եւ ընդ հովանեաւ սուրբ հօրս լինիցեմ, ամէն: Գրէս Բ [2] գրեցի մին ոճ ա գիրն Ֆռանկսիսի նավումն ուղարկեցի եւ էս մէկն Բնկլիզի նավումն ողարկեցի. դուլուդ:

Ի նուաստից նուաստայգոյն եւ յետնեալ
ծառայ տէր Յարութիւնէ նուէրս աղաչանաց
մատուցանեմ եւ գարշայպար վեհին
ըստեպ-ըստէպ համբուրեմ, վերջ:

⁵⁶ Պարսկ. langar («խարիսխ»):

⁵⁷ Պարսկ. bejad, bija («խանգարված ըլլալ, սխալ տեղը ըլլալու զգացողություն ունենալ»):

⁵⁸ Պարսկ. akhtiar («հրավունք, կամք»):

⁵⁹ Պարսկ. -արաբ. hafal («կացություն, վիճակ»):